ՅԱ.

Ի փետրվարի 18, ի գիշերին՝ յորում լուսանայր օրն երեքշաբաթի յետ բախլախորանին եղև եանղրն մեծ ի խալաթիայ, որով յանձին դարձաւ բոլոր խալաթիայ։ Սկսաւ եանղրնն ի կրպակէ ղաֆէսճի տանկի միոյ՝ որ էր ի յարքունի ճանապարհն թօփխանային... և զի յոյժ սաստիկ էր ձիւնախառն հողմն հիւսիսոյ՝ որ յայնժամ շնչէր, վասն այն անկարելի եղև չիջուցանել զհրդեհն, որ ոչ միայն յաջ և յահեակ, այլ և յետկոյս և յառաջ կոյս ընթացեալ զազանաբար կիզոյր և լափէր զշինուածսն զամենայն մինչև ի խարաքեօյն, ի յեանըք խափուն և մինչև մերձ ղուլէխափուին։ Այրեցաւ լուսաւորչի ժամն՝ մնալով միայն միջին ժամն որ էր քեաւկիր պինայ, քէմէրալթըն, ղուլէխափուսին և ամենայն տափարակն խալաթիայու։ Այրեցան և ամենայն եալը տներն խալաթիայու սկսեալ ի կրպակաց խաղախորդեացն քիրէճղաբուին մինչև ի ղուրշունլու մաղազան ներփակաբար։... մնացին միայն... քանի մի տունք ի փարմախղափուն...։ Քանի մի տունք և կրպակք տանկաց ի դուռն թօփխանային։ Եւ քանի մի տունք հայոց և տանկաց ի ղուլէղափուն... վերջապէս ի բոլոր ղալաթիայ ապրեցան ի հրդեհէ միայն տունք իբր քառասունք, և այլն ամենայն այրեցաւ։ Եւ ով կարէ գրով արձանացուցանել զաղէտ ժողովրդոց... և զխղճութիւն աղքատաց և զկորուստ ոչ միայն տանց, այլ և ընչից նոցա, և զմեռանիլ անձանց ոչ սակաւուց։... Ասի ի սառաֆօղլու սէրգիս վարդապետէն զայն չորս ղրուշն, զոր դուք այդր տուեալ էիք աշակերտին նորա գաղատացի պետրոս վարդապետին...։ Ընդ ամէնն որպէս ասի, այրեցան ի խալաթիայ տունք աւելի քան զհազարս. և տնուրք՝ աւելի քան զերիս հազարս, զի գրեթէ յամենայն տունս կային ի վարձու տնուրք երկուք և երեք։ (Հ. Զաք. Ակռս. առ Մեղրոնեան, 1771 Մարտի 1. [Կ. Պոլիս])։

ՅԲ.

Եղև յաւուրս յայսոսիկ հրդեհ մեծ և սարսափելի ի խալաթիայ, որով յանձին դարձաւ բովանդակ խալաթիայ և ամենայն եալը տունք նորա. սկսեալ ի թօփխանի դրանէն մինչև ի խարայ քեօյն և մինչև ի խուլէղափուն. այրեցաւ և լուսաւորչի ժամն հայոց և եկեղեցիքն հոռոմոց։ (Հ. Զաք. Ակ. առ Հ. Միք. Զամչ., 1771 մարտի 1. [Կ. Պոլիս])։

ՅԳ.

Ի մայիսի 1 եղև եանղրն մեծ ի ստամպօլ ի պախչայ խափուն սկսեալ ի դրանէ նոյն պախչայ խափուին մինչև ցպարիսպն արքունի պալատին՝ քերելով զպալատիւն վէզիրին. և այրեցան անբաւ տունք տանկաց և մեծամեծ խօնախք իրիճալից նոցա. և վայրն որ այրեցաւ, էր իբրու կրկնապատիկն խալաթիոյ։ Ընդ նոսին նաև եալը քեօշկին և սէփէթճիլէր քեօշկին թագաւորին, որք էին արտաքոյ պարսպի քաղաքին։... Ի սմին [մայիս] ամսոջ եղև եանղրն մեծ նաև ի պուռսա քաղաքն օսմանցոց. և լուաք թէ այրեցաւ գրեթէ կէսն քաղաքին, և չարսրն նորա բովանդակ. զորմէ ասեն գոլ պատուական քան զչարսրն ստամպօլու։ (Հ. Զաք. Ակ. առ Մեղրոնեան, 1771 մայիս 30. [Կ. Պոլիս])։

ՅԴ.

Զուրն տիգրիզ գետոյն առաւել ևս յորդեցաւ ըստ ասելոյ ոմանց, մինչև զօրինակ իմն ովկիանոսի ձևացուցանել յանապատն պասրայու դէպ ի պաղտատ։ Եւ յայսմանէ սակաւիկ մի գիշաւ տօթ քաղաքիս, ի յաճախութիւն հիւանդութեան։ Ասեն թէ ի տիարպէքիր կատաղեալ է մահտարաժամն մինչ գրեթէ ամենայն բնակչաց ևս փախչիլ ի տեղւոջէն։ Յորոց և բազումք լաստիւք